ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԸ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Փետրվարի 6-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Տաճարում մատուցվեց Ս. Պատարագ՝ նվիրված հայ ժողովրդի ամենանվիրական տոներից մեկին՝ Սուրբ Վարդանանց տոնին: Օրվա պատարագիչն ու քարոզիչն էր հոգեշնորհ Տ. Հայկազուն Ծ. վրդ. Նաջարյանը: Հավատի արարողության, Հայր Սուրբը ոգեշունչ խոսք ասաց ներկաներին՝ վերարժևորելով Վարդանանց տոնի խորհուրդն ու իմաստը, բացահայտելով նրա նշանակությունը մեր ժողովրդի կյանքում:

Սուրբ Պատրագից հետո Հոգևոր Ճեմարանի դահլիճում սկսվեց տոնին նվիրված հանդիսությունը՝ Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանի նախագահությամբ:

Միասնաբար առ Աստված հղված Տերունական աղոթքից հետո, հնչեցին Հայաստանի Հանրապետության օրհներգը և Հոգևոր Ճեմարանի քայլերգը՝ ուսանողական երգչախմբի կատարմամբ և Ռ. Շարբաթյանի խմբավարությամբ:

Այնուհետև հանդիսավոր բացման ու շնորհավորանքի խոսքով հանդես եկավ Հոգևոր Ճեմարանի տեսուչ հոգեշնորհ Տ. Հայկազուն Ծ. վրդ. Նաջարյանը:

Տեսուչ Հայր Սուրբի բացման խոսքից հետո երգչախմբի կողմից հնչեցին Վարդանանց հերոսամարտին նվիրված «Արեգակն արդարության» և Ներսես Շնորհալու «Նորահրաշ» շարականները, այս անգամ Խ. Պալյանի խմբավարությամբ:

Ապա Վարդանանց հերոսամարտին նվիրված բանախոսությամբ հանդես եկան Բ լսարանի սան Արթուր Կարապետյանը և Ե լսարանի սան Արա Նալչաջյանը: Նրանք անդրադարձան Ավարայրի դերին ու նշանակությանը՝ տալով ժամանակաշրջանի պատմական ու քաղաքական վերլուծությունը:

Բանախոսություններն ընդմիջվեցին Բ լսարանի սան Ներսես Կետիկյանի ասմունքով: Նրա արտասանությամբ հնչեց Վահան Թեքեյանի «Խորհուրդ Վարդանանց» բանաստեղծությունը:

Ապա վերստին ելույթ ունեցավ Հոգևոր Ճեմարանի երգչախումբը: Հնչեց Մակար Եկմալյանի «Լռեց» խմբերգը՝ մենակատար Զ լսարանի սան Արմեն սարկավագ Մարկոսյան:

Որից հետո Եղիշեի պատմությամբ մեզ վկայված Ավարայրից առաջ Վարդան Մամիկոնյանի և Ղևոնդ Երեցի՝ հայոց բանակին ուղղված խոսքերն արտասանեցին Գ լսարանից Արտակ Զոփիկյանը և Բ լսարանից՝ Գևորգ Սարգսյանը:

Վարդանանց ոգով գրված Նաիրի Զարյանի «Զայն հայրենական» բանաստեղծությունը արտասանեց Ա լսարանի սան Դավիթ Մարգարյանը:

Այնուհետև երգչախմբի կատարմամբ հնչեց Մ. Եկմալյանի «Պլպուլն Ավարայրի» երգը, որի ավարտին Բ լսարանի ուսանող Վարդան Իսախանյանը Եղիշեից արտասանեց Հայոց աշխարհի փափկասուն տիկնանց նվիրված հատվածը: Իսկ Բ լսարանի ուսանող Գևորգ Հարությունյանը հանդես եկավ իր «Ավարայր» բանաստեղծությամբ: Նույն լսարանից Գևորգ Լևոն Մակարյանն արտասանեց Վ. Թեքեյանի «Խորհուրդ Վարդանանց» բանաստեղծությունը, որից հետո երգչախումբը ոգեշունչ կերպով կատարեց «Երգ մեռնող հայրենասերի» խմբերգը:

Ալեքսանդր Հարությունյանի «Սասունցիների պարը» դաշնամուրային ստեղծագործությունը կատարեց Դ լսարանի ուսանող Արթուր Բոբիկյանը:

Ներսես Վանականի «Ոգով Վարդանանց» հայրենաշունչ բանաստեղծությունը արտասանեց Գեղամ սարկավագ Մարտիրոսյանը:

Օրվա խորհրդին պատշաճող Կոմիտասի «Ով Հայկազունք» երգը հնչեցրեց երգչախումբը:

Հանդիսությունն ավարտվեց Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանի օրհնությամբ և պատգամով: